Հաստատում եմ՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության աշխատակազմի ղեկավար՝ **Ա.Կարապետյան**
(Պատվիրատուի ղեկավարի անուն ազգանուն)

_____
(մակագրություն)

Արձանագրություն N 4
«ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների մատակարարման)

ք. Երևան 10 հունվարի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ Ա.Մկրտչյան, Գ.Սիմոնյան, Է.Հովսեփյան, Մ.Նազարյան

1.Որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Սահմանված կարգով ստացվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը: **«Վաչական Ազարյան Արայի» Ա/Ձ ունի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն**, իսկ «Ռեաքիմ» ՍՊԸ-ի պատասխանը դրական է:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

ա/ Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեյի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցման բացասական պատասխանը «Վաչական Ազարյան Արայի» Ա/Ձ-ի վերաբերյալ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ, 44-րդ և 45-րդ կետերի դրույթները՝ «Ռեաքիմ» ՍՊԸ-ն համարվում է **4-րդ** չափաբաժով առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկվում է ներկայացնել **4-րդ** չափաբաժնի համար համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

բ/ Գնահատող հանձնաժողովը որոշեց 11-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած, քանի որ «Ռեաքիմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվով նախատեսված գինը:

գ/ Գնահատող հանձնաժողովը գնահատեց բավարար 2-րդ, 3-րդ, 5-8-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Ռեաքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

դ/ Գնահատող հանձնաժողովը որոշեց

2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետի պահանջները, 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից կպահանջվի համապատասխան որակավորման չափանիշները հիմանավորող փաստաթղթերը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, գնահատաման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ և 45-րդ կետերի դրույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ. Սիմոնյան

_____ Է.Հովսեփյան

_____ Մ.Նազարյան